ԱՆՑԵԱԼՔ

ԱՏՐՊԵՏ

Մայիս 27–ին, Լենինականում, մեռել է գրող Ատրպետը: Նրա իսկական անունը Սարգիս Մուրայանեան էր: Ծնուել էր 1850 թ. Կարս քաղաքում: Միջնակարգ կրթութիւնը ստացել էր Պոլսում: Սկսել էր գրել 80–ական թուականներից: Իր առաջին վիպական գործն է «Խեւ Կարապետը», որից յետոյ արտադրել է բազմաթիւ գեղարուեստական երկեր, ինչպէս «Ալմաստ», «Տժվժիկը» եւ այլն, որոնցից եւ ոչ մէկը միջակութիւնից չեն բարձրացել: Ունի նաեւ պատմական ուսումնասիրութիւններ՝ «Խալիֆաթ», «Իմամաթ» եւ այլն, ինչպէս նաեւ հնագիտութեան, դրամագիտութեան, տեղագրութեան, արուեստի պատմութեան նուիրուած աշխատութիւններ: Վերջին տարիները գրում էր գլխաւորապէս «Հանդէս Ամսօրեայ»ում: Իբրեւ մարդ, Ատրպետը իրեն վարկաբեկեց 1918 թ., թիւրքերի տիրապետութեան ժամանակ Ալեքսանդրապոլում՝ կատարելով անպատիւ յանձնարարութիւններ թիւրք զինուորականների համար:

ՀԱՅԱՍՏԱՆ ԳԷՈՐԳԵԱՆ

Մայիս 28–ին, Ժընեւում, վախճանուեց երիտասարդ գրագիտուհի Տիկ. Հայաստան Գէորգեանը: Հանգուցեալը Շիրակի Դահարլու գիւղից էր, ծնուած 1901 թ. յունւ. 5–ին, գիւղական ուսուցչի ընտանիքում: Աւարտել էր Կարսի գիմնազիոնը: Համարձակ եւ ըմբոստ բնաւորութեան տէր աղջիկ էր, Դաշնակցական ուսանողական շարքերի մէջ: 1917 թ. նոյեմբերին, հակառակ հօր թախանձանքի, ծպտուած իբրեւ «երիտասարդ», մտնում է կամաւորական խմբերի մէջ, իբրեւ հեռախօսի պաշտօնեայ, իսկ յետոյ՝ փոխադրւում է Առաջին Հայկական Հրացանաձիգ գունդը, որպէս գնդացիրի զինուոր: Մասնակցում է հայ – թիւրքական կռիւներին եւ 1918 թ. փետր. 28–ին, Իլիճայի

A.R.A.R.@